

ՈՒՖՃԾ – «Տելեկոմ Արմենիա»

Երկիր	ՀԱՅԱՍՏԱՆ
Ծրագրի No.	52768
Գործունեության ոլորտ	Հեռահաղորդակցություն, լրատվամիջոցներ և տեխնոլոգիա
Ծանուցագրի տեսակ	ՄԱՍՆԱՎՈՐ
Բնապահպանական կատեգորիա	Բ
Հաստատման նախանշվող օր	Հունվարի 18, 2022թ.
Կարգավիճակ	Հաստատված
Ծրագրի ամփոփ փաստաթղթի (ԾԱՓ) հրապարակման օր	Փետրվարի 03, 2022թ.

Ծրագրի նկարագիրը

Մինչև 20 միլիոն ԱՄՆ դոլարի չափով մասնակցություն «Տելեկոմ Հայաստան» ընկերությանը տրամադրվող մինչև 45 միլիոն ԱՄՆ դոլարի հիմնական ապահովված վարկին՝ ընկերության առկա պարտքը վերաֆինանսավորելու համար, որը հիմնականում առաջացել է փոխառու միջոցների հաշվին «Թիմ» ՍՊԸ-ի ձեռքբերման արդյունքում, ինչպես նաև աճը ապահովելու նպատակով կապիտալ ներդրումների պլանը և դեպի գյուղական վայրեր ցանցի ընդլայնումը ֆինանսավորելու համար:

Ծրագրի նպատակներ

ՎԶԵԲ-ի 20 մլն ԱՄՆ դոլար կազմող վարկային միջոցները կտեղաբաշխվեն i) 3.0 մլն ԱՄՆ դոլարի չափով օպտիկամանրաթելային ցանցի կապիտալ ծախսերը ֆինանսավորելու, ինչպես նաև ii) մինչև 17.0 մլն ԱՄՆ դոլարի առկա պարտքը վերաֆինանսավորելու նպատակով (միասին՝ «Ծրագիր»):

Ազդեցությունն անցումային շրջանի վրա

ETI 63

Մրցակցային: 2019թ-ի դրությամբ FTTH (օպտիկամանրաթելը մինչև տուն) ներթափանցումը կազմում էր 7.7%: Ծրագիրը կաջակցի «Տելեկոմ Արմենիայի» գերարագ FTTH (1-10 գիգաբայթ վայրկյանում) տարածմանը, այդ թվում նաև երկրորդային քաղաքներում և գյուղական շրջաններում: Սա ժամանակակից այս ՏՀՏ

ենթակառուցվածքի ծածկույթը երկրում կհասցնի 19.2%-ի: Ուստի Ծրագիրը կապահովի ավելի հուսալի և արագ ինտերնետ կապ ողջ Հայաստանում, ինչպես նաև կապը կտարածի այն տարածքներում, որոնք թերսպասարկված են: «Տելեկոմ Արմենիայի» ցանցը լիովին բաց է մրցակիցների համար մեծածախ հիմունքներով, և Ընկերությունը պետական աջակցություն չի ստանում:

Կանաչ: Ծրագիրն աջակցում է Ընկերության ֆիքսված և շարժական ցանցերի էներգարդյունավետ արդիականացմանը, վարկային միջոցներից ԱՄՆ 3 մլն կօգտագործվի անմիջականորեն նման ներդրումների համար: Ի լրումն դրան, առաջադրվող ֆինանսավորումը տրամադրվում է մարման երկար ժամկետով և լավ մտածված մարման պրոֆիտով, որը կանխիկով ներքին ռեսուրսներ կազատի՝ ցանցի հետագա արդիականացումը ֆինանսավորելու նպատակով: Ֆիքսված ցանցի արդիականացումը ներառում է գոյություն ունեցող ոլորված պղնձե մալուխների ցանցի ենթակառուցվածքի փոխարինումը օպտիկամանրաթելային ցանցով, այդ թվում նաև հաջորդ սերնդի Պասիվ օպտիկական ցանցերով (PON) և FTTH (օպտիկամանրաթելը մինչև տուն) լուծումներով: Բջջային ցանցի արդիականացումը ներառում է Ընկերության 4G ծածկույթի և կարողությունների ընդլայնումը՝ ավելացնելով 4G բազային կայանները և այն ոլորտները, որոնք 2G/3G ծածկույթի տեղամասերում են: Գնահատականների համաձայն, իր կապիտալ ծախսերի ֆինանսավորման բաղադրիչի միջոցով Ծրագիրը կբերի սենեղգիայի առաջնային խնայողությունների՝ տարեկան 1.13 ՊՋ չափով, որը համարժեք է տարեկան 28,859 տոննա CO₂ արտանետումների խնայողությունների: Ծրագիրը հավակնում է 15% ԿՏՖ (GET) ֆինանսավորման:

Հաճախորդի մասին տեղեկատվություն

«ՏԵԼԵԿՈՄ ԱՐՄԵՆԻԱ» ՓԲԸ

ՏԵԼԵԿՈՄ ԱՐՄԵՆԻԱ ՓԲԸ-ն («ՏԵԼԵԿՈՄ ԱՐՄԵՆԻԱ»-ն կամ «Ընկերությունը») հանդիսանում է ֆիքսված գծով և բջջային հեռահաղորդակցության ծառայությունների առաջատար մատուցողը Հայաստանում:

ՎՋԵԲ ֆինանսավորման ամփոփագիր

20,000,000.00 ԱՄՆ դոլար

Առկա պարտքի վերաֆինանսավորում՝ 17,000,000 ԱՄՆ դոլար, ՎՋԵԲ ֆինանսավորմամբ կապիտալ ծախսեր՝ 3,000,000 ԱՄՆ դոլար

Ծրագրի ընդհանուր արժեք

45,000,000.00 ԱՄՆ դոլար

Բնապահպանական և սոցիալական ամփոփագիր

Բ կատեգորիայի դասակարգված (2019թ-ի ԲՍԶ) Բնապահպանական և սոցիալական համապարփակ ուսումնասիրություն է (ԲՍՀՈՒ) իրականացվել ներքին կարգով և կազմված էր լրացված ԲՍՀՈՒ հարցաշարերից, հաջորդիվ հարցերից և տարբեր փաստաթղթերի

ուսումնասիրությունից: ԲՄՀՈՒ-ին ցույց տվեց, որ Ընկերությունը համապատասխանում է ազգային օրենսդրությանը և Բնապահպանական և սոցիալական ռիսկի կառավարման բավարար կարողություններ ունի Ծրագիրը ՎՁԵԲ-ի Բ և Ս կատարողականի պահանջներին համապատասխան իրականացնելու համար: Բ և Ս ռիսկերը, որոնք կապված են Ընկերության գործառնությունների հետ, սահմանափակ են և կարող են լուծվել ռիսկերը մեղմելու ստանդարտ միջոցառումների միջոցով, այդ թվում նաև նրանց միջոցով, որոնք սահմանվում են Բնապահպանական և սոցիալական գործողությունների ծրագրում (ԲՄԳԾ): Ընկերությունից կպահանջվի ապահովել կատարողականի պահանջները և Բ և Ս տարեկան հաշվետվություն ներկայացնել Բանկին: ԲՄՀՈՒ-ն հիմնվում էր Կորպորատիվ, Covid-19-ի և երթևեկության և ճանապարհային անվտանգության հարցաշարերի ուսումնասիրությունների վրա: Ուսումնասիրվել են նաև տեխնիկական ընթացակարգերը և Ընկերության քաղաքականությունները: ԲՄՀՈՒ-ն ցույց տվեց, որ Ընկերությունը Բ և Ս հարցերը կառավարելու համար մեխանիզմներ ունի և ներկայումս ավելի է զարգացնում իր բնապահպանական կառավարման համակարգը: Մարդկային ռեսուրսների քաղաքականությունը մեծապես համապատասխանում է PR2-ին և ներառում է աշխատակցի բողոքարկման մեխանիզմ և աշխատակցի վարքագծի կանոններ: Ընկերությունը ճանաչում է աշխատակիցների կազմակերպելու իրավունքը՝ CO₂ արտանետումների կրճատելուն աջակցելու համար: Ընկերությունը բոլոր գրասենյակներում տեղադրել է էներգախնայող լամպեր և արևային վահանակներ (ֆոտովոլտային) կոմուտացիոն հեռախոսային այլ կայաններում: Ընկերությունը նպատակ ունի հետագա տարիներին ավելացնել ՖՎ-ների քանակը այլ կայաններում: Բարձր ռիսկային աշխատանքային գործունեության համար իրականացվում է Աշխատանքային առողջության և անվտանգության (ԱԱԳ) ռիսկի գնահատում այնպիսի գործունեության համար, ինչպիսին է աշխատանքը բարձրության վրա: Ընկերությունը նաև սպեցիֆիկ ԱԱԳ վերապատրաստում է իրականացնում այն աշխատակիցների համար, ովքեր ներգրավված են բարձր ռիսկային այս աշխատանքային գործունեության շրջանակներում: Ընկերության տրանսպորտային միջոցների պարկի հետ կապված մասնագիտական ճանապարհային ռիսկերի կառավարմանն աջակցելու համար Փոխադրման գծով ղեկավարը պատասխանատու է ճանապարհային անվտանգության համար, իսկ վարորդների կատարողականը վերահսկվում է Ընկերության տրանսպորտային միջոցների վրա տեղադրված Տրանսպորտային միջոցների մոնիթորինգի համակարգերի (IVMS) միջոցով: Ընկերությունը հաստատեց, որ բարելավման և տեղադրման աշխատանքներ պետք է իրականացնել Սևան ազգային պարկում, որը պահպանվող տարածք է: Դրա համար կպահանջվի սարքավորումներ տեղադրել հեռահաղորդակցության գոյություն ունեցող աշտարակների վրա և բազային կայաններ տեղադրել տանիքներում, ինչպես նաև մանրաթելային օպտիկական մալուխներ անցկացնել գոյություն ունեցող, ստորգետնյա խողովակների միջով և օդային ենթակառուցվածքի և օդային էլեկտրահաղորդման սյուների վրայով և չի ներառի քաղաքացիական կամ շինարարական որևէ աշխատանք: Գոյություն ունեցող ենթակառուցվածքի որևէ արդիականացում չի նախատեսվում: Ընկերությունը Բ և Ս տեղեկատվությունը ներկայացնում է իր տարեկան հաշվետվություններում և ներառում է տեղեկատվություն տեղական սոցիալական ծրագրերի մասին, որոնց վերջինս աջակցում է, այդ թվում նաև տեղական սթարթափներին և ինովացիային, և նաև տեղեկատվություն է տրամադրում CO₂ արտանետումների կրճատման իմաստով գրանցված բնապահպանական առաջընթացի մասին: Ծրագրի համար մշակվել է ԲՄԳԾ և այն Հանախորդի հետ կհամաձայնեցվի մինչև Ծրագրի ստորագրումը: ԲՄԳԾ-ն ներառում է Ընկերության գոյություն ունեցող Բնապահպանական, աշխատանքային առողջության և անվտանգության կառավարման համակարգերի հետագա զարգացումը՝ ISO ստանդարտներին համապատասխանելու համար, հատուկ անձի նշանակումը՝ ընկերության

բնապահպանական գործառույթը կառավարելու և գործընկերոջ համար առկա դրույթներն ուսումնասիրելու և Բ և Ս մեխանիզմները ներառելու համար: Կպահանջվի նաև, որպեսզի Հաճախորդը նախքան աշխատանքի մեկնարկը խորհրդակցի շահագրգիռ բոլոր կողմերի հետ, որոնք ասոցիացվում են Սևան Ազգային պարկի հետ, որպեսզի նախատեսվող աշխատանքը համապատասխանի և չազդի Սևան Ազգային պարկի պահպանման նպատակների վրա, որոնք որոշվում են Կառավարման պլանով, և աշխատանքը նախաձեռնվում է Ազգային պարկի կառավարման իրավասու մարմնի անմիջական վերահսկողության ներքո: Բանկը մոնիթորինգի կենթարկի Ծրագրի Բ և Ս կատարողականը՝ ուսումնասիրելով Բ և Ս տարեկան հաշվետվությունները՝ ի լրումն տեղամասեր այցելությունների, եթե դրանք անհրաժեշտ լինեն:

Տեխնիկական համագործակցություն

Դոնորների ֆինանսավորմամբ ՏՀ: 75,000 Եվրո (հաստատված) գումարի չափով առևտրային համապարփակ ուսումնասիրություն է ֆինանսավորվել ՎՁԵԲ-ի բաժնետիրոջ հատուկ հիմնադրամի գիտելիքի տնտեսության նախաձեռնության շրջանակներում:

Հաճախորդի աջակցություն: Հաճախորդը ավելի քան 15,000 Եվրո է ներդրել իրավական և հարկային պատշաճ ուսումնասիրությունների համար:

Լրացուցիչություն

Ֆինանսավորման կառուցվածք: ՎՁԵԲ-ն առաջարկում է մարման ժամկետ, որն ավելի երկար է, քան հասանելի է շուկայում մյուս հաճախորդներին՝ խելամիտ պայմաններով: Մարման երկար ժամկետը, որն ավելի երկար է, քան այն, ինչ տրամադրվում է մասնավոր հատվածի վարկատուների կողմից, կարևոր է «Տելեկոմ Արմենիայի» համար՝ իր փոխակերպման բիզնես պլանն իրագործելու համար: ՎՁԵԲ-ը կվերցնի առաջադրվող սինդիկացված գործիքի զգալի մասը՝ հավակնոտ կապիտալ ծախսերի հետ կապված պլաններին աջակցելու նպատակով ֆինանսավորման բացը լրացնելու համար:

Ռիսկը կիսելը: ՎՁԵԲ-ը ֆինանսական կամ ռազմավարական կոմֆորտ է ապահովում հաճախորդների և ներդրողների համար՝ ոչ ֆինանսական ռիսկերը, ինչպես օրինակ՝ երկրի, կարգավորման, ծրագրի, տնտեսական ցիկլի կամ քաղաքական ռիսկերը մեղմելու համար: ՎՁԵԲ-ը տեխնիկական աջակցություն է տրամադրել Ծրագրի նախապատրաստման համար՝ խորհրդատվության տեսքով՝ առևտրային կոմպլեքս հաշվետվություն մշակելու համար և աջակցել է գործառնության ֆինանսական կառուցվածքի իմաստով՝ պահանջվող ներդրումային պլանները ներառելու համար: Ծրագիրը ներառում է «Տելեկոմ Արմենիայի» xDSL և 2G/3G ցանցերի քննությունը, ինչպես նաև Ընկերության հետագա ռազմավարական զարգացման վերանայումը: Զանի որ այս բիզնես պլանը հիմնված է վերականգնման պատմության և դրա հետ կապված գործունեության ռիսկերի վրա, ՎՁԵԲ-ի կողմից լիազորված հեռահաղորդակցության

հեղինակավոր խորհրդատուի կողմից պատրաստված համապարփակ ուսումնասիրության հաշվետվությունը փարատել է վարկատուների մտահոգությունները: Հաշվետվությունը ներառում էր Ընկերության առկա ցանցի և կապիտալ ներդրումների պլանի տեխնոլոգիական վերանայումը, ինչպես նաև «Տելեկոմ Արմենիայի» կանխատեսվող եկամուտների և կապիտալ ծախսերի առևտրային վերլուծությունը: Առանց նման հաշվետվության, վարկատուները չէին կարողանա գնահատել Ընկերության բիզնես պլանի կենսունակությունը:

Ընկերության կոնտակտային տեղեկատվություն

Արփինե Չալկյան, Ռազմավարական ծրագրերի և կորպորատիվ զարգացման ղեկավար

arpine.chalkyan@telecomarmenia.am

+374 95 988 723

<https://www.beeline.am/en/>

Ազատության պողոտա, 24/1 շենք, 0014, Երևան, Հայաստան

Անցումային շրջանի ընկալումը

[Այստեղ](#) կարող եք լրացուցիչ տեղեկություններ գտնել առ այն, թե ինչ մոտեցումներ է կիրառում ՎՉԵԲ-ը անցումային շրջանում առաջընթացի վրա ազդեցությունը չափելու համար:

Բիզնես հնարավորություններ

Բիզնես հնարավորությունների կամ գնումների համար դիմե՛ք հաճախորդի ընկերությանը:

ՎՉԵԲ-ի հետ կապված (գնումներին չառնչվող) բիզնես հնարավորությունների համար դիմե՛ք.

Հեռ.՝ +44 20 7338 7168

Էլ-փոստ՝ projectenquiries@ebrd.com

Պետական ոլորտում ծրագրերի համար այցելե՛ք [ՎՉԵԲ-ի գնումներ](#):

Հեռ.՝ +44 20 7338 6794

Էլ-փոստ՝ procurement@ebrd.com

Ընդհանուր հարցումներ

Կարող եք անել կոնկրետ հարցումներ՝ օգտագործելով [ՎՉԵԲ-ի հարցումների ձևաթուղթը](#):

Բնապահպանական և սոցիալական քաղաքականություն (ԲՍՔ)

[ԲՍՔ-ն](#) և դրա հետ կապված՝ Գործունեության նկատմամբ պահանջները (ԳՊ-ներ) սահմանում է այն ուղիները, որոնց միջոցով ՎՉԵԲ-ն իրականացնում է իր հանձնառությունը՝ խթանել «Եկոլոգիապես առողջ և կայուն զարգացումը»: ԲՍՔ-ն և ԳՊ-ները պարունակում են հատուկ դրույթներ, ըստ որոնց հաճախորդները պետք է համապատասխանեն տեղեկությունների հրապարակայնացման և խորհրդատվության մասին ազգային օրենքների կիրառվող պահանջներին, ինչպես նաև ստեղծեն բողոքարկման մեխանիզմ՝ շահագրգիռ կողմերի մտահոգությունները և բողոքները ստանալու և լուծումները դյուրացնելու նպատակով, մասնավորապես, հաճախորդի և ծրագրի կողմից բնապահպանական և սոցիալական ասպեկտների կատարողականի վերաբերյալ: Կախված ծրագրի բնապահպանական և սոցիալական ռիսկերի և ազդեցությունների բնույթից և մասշտաբից, ՎՉԵԲ-ը լրացուցիչ պահանջում է, որ իր հաճախորդները, անհրաժեշտության դեպքում, տեղեկություն հրապարակեն ծրագրից բխող ռիսկերի և ազդեցությունների մասին կամ բովանդակալից խորհրդակցություններ անցկացնեն շահագրգիռ կողմերի հետ, դիտարկեն նրանց կարծիքներն ու արձագանքն դրանց:

Այս կապակցությամբ ՎՉԵԲ-ի գործելակերպի վերաբերյալ ավելի մանրամասն տեղեկությունները ներկայացված են [ԲՍՔ](#)-ում:

Բարեվարքություն և համապատասխանություն

ՎՉԵԲ-ի՝ Համապատասխանության վերահսկման գլխավոր տնօրենի գրասենյակը (ՀՎԳՏԳ) խթանում է լավ կառավարումը և ապահովում բարեվարքության բարձրագույն չափանիշների կիրառումը Բանկի գործունեության բոլոր ասպեկտներում՝ միջազգային լավագույն փորձի համաձայն: Բանկի բոլոր հաճախորդների վերաբերյալ իրականացվում է բարեվարքության պահանջներին համապատասխանության ստուգում-ուսումնասիրություն՝ համոզվելու, որ ծրագրերը չեն պարունակում Բանկի համար անընդունելի ռիսկեր բարեվարքության կամ հեղինակության առումով: Բանկի համոզմամբ, ծրագրի գնահատման և հաստատման փուլերում խնդիրների հայտնաբերումն ու լուծումը Բանկի գործարքների բարեվարքության ապահովման ամենաարդյունավետ միջոցներն են: ՀՎԳՏԳ-ն առանցքային դեր է կատարում պաշտպանիչ այս գործողություններում, ինչպես նաև օգնում է վերահսկել բարեվարքությանն առնչվող ռիսկերը ծրագրերի հետներդրումային փուլերում:

ՀՎԳՏԳ-ն նաև պատասխանատու է ՎՉԵԲ-ի կողմից ֆինանսավորվող ծրագրերում կեղծիքի, կոռուպցիայի և չարաշահման կապակցությամբ մեղադրանքների հետաքննության համար: Ցանկացած անձ, ինչպես Բանկի ներսում, այնպես էլ նրանից դուրս, ով կասկածներ ունի, որ առկա են կեղծիքի կամ կոռուպցիայի դեպքեր, պետք է գրավոր զեկույց ներկայացնի Համապատասխանության վերահսկման գլխավոր տնօրենին էլ-փոստով՝ compliance@ebrd.com: Խնդիրների մասին բոլոր զեկույցները կքննվեն ՀՎԳՏԳ-ի կողմից՝ հետագա քայլերը որոշելու նպատակով: Քննվելու են բոլոր զեկույցները, այդ թվում՝ անանուն զեկույցները: Չեկույցները կարող են ներկայացնել Բանկի կամ Բանկի գործունեության ցանկացած երկրի լեզվով: Տեղեկությունը տրամադրելիս անհրաժեշտ է դրսևորել բարեխիղճ մոտեցում:

Տեղեկությունների հասանելիության քաղաքականություն (ՏՀՔ)

ՏՀՔ-ն սահմանում է, թե ինչպես է ՎՉԵԲ-ը հրապարակայնացնում տեղեկությունները և խորհրդակցում շահագրգիռ կողմերի հետ, որպեսզի 2020թ. հունվարի 1-ից ուժի մեջ մտնելուց հետո նպաստի ՏՀՔ-ի ռազմավարությունների, քաղաքականությունների և գործառնությունների մասին ավելի լավ իրազեկմանն ու ընկալմանը: Խնդրում ենք այցելել [Տեղեկությունների հասանելիության քաղաքականության](#) կայքէջը՝ պարզելու, թե ինչ տեղեկություն կա ՎՉԵԲ-ի կայքում:

Տեղեկություններ ստանալու համար կարող եք կոնկրետ հարցումներ ներկայացնել՝ օգտագործելով [ՎՉԵԲ-ի հարցումների ձևաթուղթ](#):

Ծրագրերի հաշվետվողականության անկախ մեխանիզմ (ԾՀԱՄ)

Եթե Հաճախորդի կամ Բանկի հետ բնապահպանական և սոցիալական ասպեկտների կամ հրապարակայնացման հետ կապված խնդիրների լուծմանն ուղղված ջանքերն (օրինակ, Հաճախորդի՝ Ծրագրի մակարդակով բողոքարկման մեխանիզմի կամ Բանկի ղեկավարության հետ անմիջական ներգրավման միջոցով) ապարդյուն են, ապա

անհատներն և կազմակերպությունները կարող են դիմել ՎՁԵԲ-ի՝ Ծրագրերի հաշվետվողականության անկախ մեխանիզմին (ԾՅԱՄ)՝ իրենց մտահոգող խնդիրների լուծումը ստանալու համար:

ԾՅԱՄ-ն անկախ եղանակով քննում է Ծրագրի հետ կապված խնդիրները, որոնք, ենթադրաբար, վնաս են պատճառել (կամ, հավանաբար, կարող են վնաս պատճառել): Մեխանիզմի նպատակն է աջակցել Ծրագրի շահագրգիռ կողմերի միջև երկխոսությանը՝ շրջակա միջավայրի, սոցիալական ասպեկտների և հրապարակայնացման հետ կապված խնդիրները լուծելու նպատակով, պարզել, արդյոք Բանկը համապատասխանել է իր իսկ [Բնապահպանական և սոցիալական քաղաքականությանը](#) կամ իր՝ [Տեղեկությունների հասանելիության քաղաքականության](#)՝ Ծրագրին վերաբերող կոնկրետ դրույթներին, և, անհրաժեշտության դեպքում, վերացնել այդ քաղաքականություններին վերաբերող ցանկացած անհամապատասխանություն՝ միաժամանակ կանխելով Բանկի անհամապատասխանության դեպքերն ապագայում:

Խնդրում ենք այցելել [Ծրագրերի հաշվետվողականության անկախ մեխանիզմի կայքերը](#)՝ իմանալու ավելին ԾՅԱՄ-ի և նրա լիազորությունների մասին, ինչպես [Դիմում ներկայացնել](#) ստուգում անցկացնելու համար, կամ կապ հաստատել ԾՅԱՄ-ի հետ էլ-փոստով ipam@ebrd.com՝ ԾՅԱՄ-ի և դիմում ներկայացնելու վերաբերյալ ուղղորդում և լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար: